community

The New Apostolic Church around the world

04/2023/AM

Վստահեք Սուրբ Հոգու շնորհին



Խմբագրական
Ինչ Աստված է տեսնում

Ժամերգություն
Ուժով, սիրով և զգաստությամբ

Վարդապետական ուսմունք
Կանանց ձեռնադրություն՝ ուսուցողական հետևություններ

New Apostolic Church
International

Խմբագրական

3 Ինչպես է օգնում Աստված

Ժամերգություն

4 Զորությամբ, սիրով և զգաստությամբ

Շրջանային բաժին

10 Հայաստանի Նորառաքելական կեղեցու կանանց երգչախումբը 30 տարեկան է

Մանկական անկյուն

12 Հիսուսի համբարձումը

14 Այցելություն Ռութին՝ Ֆրիիթաունում / Սիերրա Լեոնե/

Տեսություն

16 Կանանց ձեռնադրություն՝ ուսուցողական հետևություններ

Տիտղոսաթերթի լուսանկարը՝ Գրանթ Փիչերի
Շապիկի ետևի լուսանկարը՝ ՆԱԵ Հարավային Աֆրիկա

Ինչպես է օգնում Աստված

Լուսանկարը՝ Միջազգային ՆԱԵ

Սիրելի հավատացյալ քույր-եղբայրներ,

մենք ապրում ենք բարդ աշխարհում՝ ամեն տեղից գալիս են լուրեր, որոնք ցույց են տալիս, թե ինչ զորեղ է չարը: Դա դժվարեցնում է մեր գործը: Այս դեպքում լավ է ժամերգության գնալը, քանի որ այնտեղ մենք Սուրբ Հոգուց լսում ենք, որ Աստված ավելի զորեղ է:

Շատ տեղերում այսօր վիճակը իսկապես վատ է և դրամատիկ, սակայն, եկեք չմոռանանք, որ այդպիսի ժամանակներ մարդկության պատմության ընթացքում միշտ էլ եղել են: Եվ միշտ էլ հավատացյալ մարդիկ կարողացել են Սուրբ Հոգու ներգործությամբ մխիթարություն և ուժ գտել Աստվածաշնչում: Ինչ այն ժամանակ Աստված արել է, կարող է նաև այսօր անել Սուրբ Հոգու զորությամբ:

Այս դժվար ժամանակներում եկեք չմոռանանք Աստծուն երկրպագելը: Չմոռանանք, որ նա կատարյալ է այն ամենում, ինչ անում է, ինչում ներկա է: Նա մեզ ընտրել է և շարունակում է իր պլանը: Նա կարող է մեզ օգնել, եթե մենք մնանք աստվածավախության, հնազանդության, խոնարհության, Աստծո հանդեպ վստահության, ակնածանքի և սիրո մեջ: Երբեմն նա ինքն է միջամտում, երբեմն նա օգնում է այլ մարդկանց միջոցով: Դա մենք պետք է ընդունենք: Երբեմն նրա օգնությունը բաղկացած է լինում հետևյալ առաջադրանքից՝ կիսիր մերձավորիդ հետ, և ես քեզ ավելին կտամ, քան դու ես տվել:

Սրտանց ողջույններ

Ժան-Լյուք Շնայդեր

Զորությամբ, սիրով և զգաստությամբ

Լուսանկարները՝ Գրանթ Փիչերի, Դեվմայնե Ֆիրեթի

Թաֆելզիգի եկեղեցին / Հարավային Աֆրիկա/
ունի շուրջ 4000 մարդու տեղ

Թիմոթեոս Բ 1, 7

Որովհետև Աստված մեզ երկչոտության ոգի չտվեց, այլ՝ զորության, սիրո և զգաստության:

Սիրելի եղբայրներ և քույրեր, իսկապես մեծ ուրախություն է Հոգեգալստյան տոնը այսպիսի մեծ և հիանալի շրջանակով տոնելը: Եթե մենք մտածում ենք բոլոր նրանց մասին, ովքեր այսօր միացած են մեզ, ապա շնորհակալ ենք լինում մեր երկնային Հորը, որ նա դա հնարավոր է դարձրել: Այսօր մենք հիշատակում ենք Սուրբ Հոգով լցվելը և այն, ինչը մենք անվանում ենք Քրիստոսի եկեղեցու ծնունդ:

Շնորհակալություն: Այո, սիրելի եղբայրներ և քույրեր, մենք լսեցինք, թե ինչ է տեղեկացնում Աստվածաշունչը Հոգեգալստյան իրադարձության մասին, այն կարող է օգտակար լինել այդ մեծ իրադարձության նշանակությունը և ամբողջ նպատակը վերհիշելու համար: Ինչպես միշտ, ամեն ինչ սկսվում է Աստծո սիրով: Այն սկիզբն է ամեն

ինչի: Ամենազոր Աստված սիրում է մարդկանց և իր սիրով նա ուզում է նրանց համար հնարավոր դարձնել Հայր Աստծո, Որդի Աստծո և Սուրբ Հոգի Աստծո հետ միասնության հասնելը: Սա այն է, ինչ նպատակադրել է սիրելի Աստված: Նա ցանկանում է, որ մարդը մուտք ունենա դեպի Հոր, Որդու և Սուրբ Հոգու հետ միասնություն: Այս նպատակով Աստված երկիր է ուղարկում իր Որդուն, որպեսզի նա բացի փրկության դարպասը, որպեսզի հնարավոր դարձնի մարդու մուտքը դեպի փրկություն, դեպի Աստծո հետ միասնություն: Հիսուս Քրիստոսը այդ դարպասը բացում է իր զոհաբերությամբ:

Հետո Հիսուս Քրիստոսը համբարձվում է երկինք, և Սուրբ Հոգի Աստվածը ուղարկվում է երկիր, որպեսզի փրկության այդ գործը շարունակվի: Այսօր էլ Սուրբ Հոգին երկրի վրա անում է իր գործը, որպեսզի մարդկանց համար փրկությունը հնարավոր դարձնի: Սուրբ Հոգի Աստվածն աշխատում է այն բանի վրա, որ փրկի մարդկանց և նախապատրաստի Հիսուս Քրիստոսի գալստյանը: Հետո կգա Հիսուս Քրիստոսը, որպեսզի իր յուրայիններին իր թագավորություն տանի, որտեղ նրանք հավիտենական միասնության մեջ կլինեն Աստծո հետ: Սա այն գործն է, որ այսօր Սուրբ Հոգին կատարում է, իսկ դա տեղի է ունենում եկեղեցում: Այնտեղ Սուրբ Հոգին իրականացնում է իր առաջադրանքը- գլխավորապես առաքյալների ծառայության միջոցով:

Առաքյալների ծառայության միջոցով Սուրբ Հոգին մեզ սրբացնում է եկեղեցում և նախապատրաստում Աստծո հետ միասնության հասնելու համար: Առաջին մարդը, ով Աստծո հետ միասնության մեջ է, Հիսուս Քրիստոսն է՝ հարություն առնվածը: Եթե մենք էլ ենք ուզում Աստծո հետ միասնության հասնել, եթե ուզում ենք Քրիստոսի հետ հավիտենական միասնության մեջ լինել, ապա մենք պետք է դառնանք այնպիսին, ինչպիսին նա է: Սա այն ճանապարհն է, որին մենք պետք է հետևենք: Եթե մենք ուզում ենք հավերժ Քրիստոսի մոտ լինել, ապա մենք պետք է այնպիսին դառնանք, ինչպիսին նա է, մտածենք այնպես, ինչպես՝ նա, գործենք այնպես, ինչպես՝ նա, լինենք այնպիսին, ինչպիսին նա է:

Ո՞վ էր, ո՞վ է Հիսուս Քրիստոսը: Հիսուս Քրիստոսը սիրողն է և ծառայողը: Նա ուղարկվել է երկիր, որպեսզի ծառայի մարդուն և Աստծուն ու բացի փրկության դարպասը: Հետո նա վերադառնում է իր Հոր մոտ: Իսկ ի՞նչ է անում նա երկնքում: Նա շարունակում է ծառայել: Նա բարեխոսում է մեզ համար: Նա օգնում է մեզ: Նա ծառայում է մեզ:

Որպեսզի դառնանք Հիսուս Քրիստոսի նման - մտածենք, գործենք և լինենք այնպիսին, ինչպիսին նա է, ուրեմն՝ մենք պետք է սիրենք և ծառայենք: Այս հիմքով ենք մենք կոչված ծառայելու, և ոչ թե այն բանի համար, որ Աստված ունի մեր օգնության կարիքը: Ամենազոր Աստված ոչնչից ստեղծել է երկինքն ու երկիրը: Նա իմ կարիքը չունի իր գործը ավարտելու համար: Նա կարող է դա առանց ինձ անել: Խոսքն այն մասին չէ, որ Աստված մարդկանց օգնության կարիքն ունի: Աստված ոչ ոքի կարիքը չունի: Սակայն, ես պետք է ծառայեմ, որպեսզի դառնամ Հիսուսի նման՝ դա միակ ճանապարհն է ինձ համար, որը ինձ կտանի Աստծո հետ հավիտենական միասնության: Ես ուզում եմ նմանվել Քրիստոսին, այսինքն՝ ես ուզում եմ ծառայել:

Ի՞նչ է նշանակում Հիսուս Քրիստոսի նման ծառայելը: Մենք պետք է մյուսներին օգնենք, որպեսզի նրանք էլ գտնեն փրկությունը, իսկ դրանով կաջակցենք Աստծո փրկության պլանի կատարմանը: Մենք պետք է հոգանք այն բանի համար, որ մարդիկ շարունակեն մուտք ունենալ դեպի փրկություն, իսկ դրա համար պետք է տեղեկացնենք Ավետարանը: Մարդիկ պետք է տեղեկացված լինեն Հիսուս Քրիստոսի և Աստծո արքայություն մտելու հնարավորության մասին:

Ամեն ինչ սկսվում է Աստծո սիրով:

Մենք պետք է հոգանք այն բանի համար, որ փրկությունը եկեղեցում հասանելի մնա՝ այսինքն՝ մենք պետք է աջակցենք, որ Ավետարանը և մեղքերի քավությունը տեղեկացվի, որ կարողանան մատուցվել եկեղեցական խորհուրդները, որ եկեղեցում կարողանան ապրել Սուրբ Հոգու միասնությունը: Սա է իմաստը: Դրա համար մենք պետք է ծառայենք: Եթե մենք մի օր Քրիստոսի հետ ղեկավարել ուզենանք, ապա մենք պետք է դառնանք այնպիսին, ինչպիսին նա է և ծառայենք այնպես, ինչպես նա է ծառայել ու ծառայում:

Ես շատ խոսքեր եմ լսում, երբ ասում են՝ ,, Սակայն այս ընթացում այնքան դժվար է դարձել: Մարդիկ այլևս չեն հետաքրքրվում Աստծով: Նրանց չի հետաքրքրում հավատը: Նրանք Աստծո կարիքը չունեն, առանց Նրա էլ նրանք իրենց լավ են զգում: Այսօր գրեթե անհնար է Հիսուս Քրիստոսի վկա լինելը: Եկեղեցին գոյատևելու շանսեր չունի,,: Մյուսներն ասում են՝,, Այդ ամենը գեղեցիկ է, բայց ոչ իմ պարագայում, ես դա չեմ կարող: Ես ի վիճակի չեմ դա անել: Ես շատ թույլ եմ: Ես շատ փոքր եմ,, : Մի քանիսն էլ ասում են՝ ,, Գիտե՞ս ես այնքան շատ եմ զբաղված: Ես այնքան շատ խնդիրներ ունեմ, որոնք պետք է լուծեմ: Ես ուժ ու հնարավորոբություն չունեմ



ծառայելու և եկեղեցու գոյատևմանը աջակցելու: Ես հնարավորություն չունեմ ուրիշների փրկությանն աջակցելու,,:

Այդ դեպքում պետք է հիշել այսօրվա ժամերգության աստվածաշնչյան խոսքը՝ Մի վախեցիր, Աստված մեզ երկչոտության ոգի չի տվել: Սուրբ Հոգու շնորհների միջոցով մենք ունակ ենք Տիրոջը ծառայել և մեր առաջադրանքը կատարել: Թարգմանությունը տարբեր լեզուներով տարբեր է: Այստեղ խոսքը նրա մասին է, որ Աստված մեզ երկչոտության ոգի չի տվել: Այլ լեզուներով այն թարգմանվում է որպես անվճառականության ոգի, այլ տարբերակներով՝ որպես վախկոտության ոգի: Բայց դրանք բոլորն էլ նույն նշանակությունն ունեն: Այն ոգին, որ Աստված մեզ տվել է, երկչոտության ոգի չէ, անվճառականության ոգի չէ, վախկոտության ոգի չէ: Դա նշանակում է՝ մի վախեցիր:

Մի վախեցիր: Ուժի ոգին է, որ բնակվում է քո մեջ:

Վախկոտը նա է, ով տեղի է տալիս կամ կորցնում արիությունը, երբ դժվարության է հանդիպում: Վախկոտ մի եղիր: Մի վախեցիր քո առաջադրանքից: Հավատա Սուրբ Հոգու շնորհին, հավատա քո Սուրբ կնունքին: Հավատ դրան: Աստված քեզ ունակ է դարձրել դառնալու Հիսուս Քրիստոսի նման այն իմաստով, որ դու կարողանաս ծառայել, ինչպես Հիսուս Քրիստոսն է ծառայում, և դու կարողանաս սիրել, ինչպես Հիսու Քրիստոսն է սիրում: Սուրբ Հոգին քեզ ունակ է դարձրել դրա համար:

Սուրբ Հոգին զորության ոգի է: Սուրբ Հոգին նկարագրվում է նաև որպես Աստծո ուժ: Դա Աստծո գործունեությունն է, դրանք Աստծո գործերն են: Սուրբ Հոգու միջոցով Աստված արտահայտում է իր ուժը, իր զորությունը: Հիշեք այն մասին, որ եկեղեցին մարդու ստեղծած գործը չէ: Եկեղեցին Սուրբ Հոգու գործն է: Եթե այն մարդու ստեղծած գործը լիներ, այն այլևս գոյություն չէր ունենա: Մենք ճանաչում ենք մարդկանց և գիտենք, թե ինչի են նրանք ունակ, իսկ ամենից առաջ՝ ինչի նրանք ունակ չեն: Եկեղեցին այլևս գոյություն չէր ունենա, եթե այն մարդու գործը լիներ: Բայց այն Սուրբ Հոգու գործն է, իսկ Սուրբ Հոգին Աստծո զորությունն է: Ոչինչ չի կարող Սուրբ Հոգուն խանգարել կատարելու իր առաջադրանքը : Եկեղեցին հաղթահարելու է մահը: Ոչ ոք չի կարող Սուրբ Հոգուն խանգարել եկեղեցում իր առաջադրանքը կատարելու:

Մենք ընդունել ենք Սուրբ Հոգու շնորհները, ինչպես Հիսուս Քրիստոսն էր որպես մարդ ընդունել Սուրբ Հոգու շնորհները: Սուրբ Հոգին նրա հետ էր, իսկ դա նշանակում է, որ Սուրբ Հոգին Հիսուսին ունակ էր դարձրել չարին հաղթելու և մեռելներից հարություն առնելու: Պողոսն ասում է, որ եթե այդ ոգին մեր սրտերում բնակվի, մենք կկարողանանք կատարել այն, ինչը մարդուն անհնար է թվում, քանի որ այն նույն ուժն է: Եթե ոգին , որը Հիսուս Քրիստոսին ունակ է դարձրել չարը հաղթահարելու և մեռելներից հարություն առնելու, ապրի քո մեջ, դու կարող ես անել այն, ինչ Հիսուսն է քեզնից սպասում, պարզապես հավատա դրան: Այն կախված չէ քո ունակություններից: Այն կախված է քո պատրաստակամությունից: Եթե դու հավատում ես, դու կարող ես անել: Մի վախեցիր: Այն աշխատանքը, որն արվում է Սուրբ Հոգով,

Տարածաշրջանային եկեղեցու երաժշտական բաժնից Ջոն Ռոդրիքեսի կողմից ,,Հոգով նորոգված,, երգչախումբը, մանկական երգչախումբը և նվագախումբը հիացրել են ներկաներին

երբեք իզուր չէ: Կարո՞ղ եմ մեկ անգամ ևս կրկնել: Այն աշխատանքը, որն արվում է Սուրբ Հոգով, երբեք իզուր չէ: Մի վախեցիր: Այն զորության ոգին է, որն ապրում է քո մեջ:

Դա նաև սիրո ոգին է: Ես գիտեմ, որ երբ մենք սիրո մասին ենք խոսում, ապա երբեմն թյուրիմացություն է լինում, քանի որ մենք մտածում ենք այն սիրո մասին մասին, որն առկա է տղամարդու և կնոջ միջև, երեխաների և ծնողների միջև : Բայց դա այդ չէ: Աստծո սերն ավելին է, քան էմոցիաներն ու զգացմունքները: Աստծո սերը զորեղ խոստում է:

Աստված սիրում է մարդուն և անում է ամեն ինչ, որպեսզի նրան փրկի և իր հետ միասնության տանի: Աստծո սերը ուժեղ խոստում է: Աստծո սերը ինքնազոհաբերող սեր է, ինքնազոհաբերող էներգիա: Աստծո սերը շատ ավելին է, քան էմոցիաներն ու զգացմունքները:Պողոսն ասում է, որ այդ սերը մեր սրտերը կլցվի, եթե մենք ընդունենք Սուրբ կնունքի՝ խորհուրդը: Ես սիրում եմ այս արտահայտությունը՝ լցվել: Աստծո սերը լցվեց մեր սրտերը: Մենք միայն մի քանի կաթիլ չենք ստացել, Աստծո սերը լցվել է մեր սրտերը, որպեսզի այն մեր ողջ էությունը, մեր ամբողջ սիրտը և մեր ամբողջ հոգին լցվի: Աստված մեզ տվել է այն մաքսիմալը, ինչը կարող է մարդն ընդունել:

Սուրբ Հոգու միջոցով Աստծո սերը լցվում է քո սիրտը: Եթե մենք դա գիտակցենք, եթե դրան հավատանք, ապա մեր արձագանքը շատ պարզ կլինի: Այդ դեպքում մենք շնորհակալ կլինենք Աստծուն և կսիրենք նրան, քանի որ նա այդքան բարեհոգի և ողորմած է: Նրա սերը մեր հանդեպ այնքան մեծ է, որ մենք այլ բան չենք կարող, քան նրան սիրուն արձագանքելը: Այն ամենը, ինչ մենք Աստծո համար ենք անում, անում ենք շնորհակալությամբ: Դա մեզ ուժեղացնում է: Մենք չենք ծառայում նրա համար, որ ստիպված ենք դա անել: Մենք ծառայում ենք սիրուց և շնորհակալությունից ելնելով:

Երբ մենք այս մոտիվացիայով ենք ծառայում, ապա մեր ծառայությունը մարդու պահվածքից կախված չի լինում, այն կախված չէ նաև նրա շնորհակալ լինելուց: Մենք կախված չենք մեր աշխատանքի հաջողությունից: Մենք կախված չենք փառքից, որը կստանանք կամ չենք ստանա դրա համար : Մեր ծառայությունը իսկապես անսասան է, քանի որ այն մոտիվացված է միայն մեր շնորհակալությամբ: Ինչ էլ պատահի, ինչ էլ մարդիկ անեն, մեզ շնորհակալություն կհայտնեն, թե՝ ոչ, մեզ կքննադատեն, թե՝ ոչ, հաջողակ ենք մենք, թե՝ ոչ, դա այլևս ոչ մի դեր չի խաղում: Մենք դա անում ենք Տիրոջ համար՝ սիրուց և շնորհակալությունից ելնելով: Իսկ դա մեզ ուժեղ և ունակ է դարձնում ծառայելու, ինչ էլ պատահի:

Մենք ծառայում և սիրում ենք այնպես, ինչպես Հիսուսն է մեզնից ակնկալում: Մեր ցանկությունն է ուրիշների փրկությանը աջակցելը: Մենք ուզում ենք, որ մյուսներն էլ նույն ողորմածությունը, նույն շնորհը ստանան և կարողանան Աստծո հետ միասնություն կազմել, ինչպես մենք ենք կարողանում: Դրա համար էլ մենք ծառայում ենք Տիրոջը եկեղեցում և ուզում ենք այն բանի համար հոգալ, որ փրկությունը հասանելի լինի յուրաքանչյուր հավատացյալի համար, ով դեպի Տերն է գալիս: Մեր առաջադրանքը ուրիշներին ստիպելը չէ դեպի Հիսուսը գալը, սակայն մեր առաջադրանքն է հոգալ, որ յուրաքանչյուրը, ով որոշել է դեպի Հիսուսը գալ, կարողանա ժամերգությունն ապրել, որ նա կարողանա լսել Ավետարանի տեղեկացումը և ապրի

Հոգեգալստյան տոնին ներկա էին շրջանային առաքյալը և շատ այլ առաքյալներ

մեղքերի քավությունը, որ կարողանա ընդունել եկեղեցական խորհուրդները, որ կարողանա ապրել Աստծո զավակների հետ միասնությունը, Աստծո ներկայությունը իր յուրայինների մեջ: Եղբայրներ և քույրեր, մեր հիմնական մոտիվացիան է՝ ծառայել Քրիստոսի եկեղեցում, յուրաքանչյուրն իր տեղում: Մենք ծառայում ենք Տիրոջը, որպեսզի նրան շնորհակալություն հայտնենք, որպեսզի մեր սերն ու շնորհակալությունն արտահայտենք: Մենք ծառայում ենք Տիրոջը, քանի որ մենք սիրում ենք մեր մերձավորին, իսկ մեր առաջադրանքը կայանում է նրանում, որ հոգանք այն բանի համար, որ եկեղեցում հասանելի լինի փրկությունը, սիրո ոգին:

Ոգու երրորդ հատկությունը, որի մասին այստեղ նկարագրված է, զգաստությունն է: Այլ թարգմանություններում նշվում է որպես իմաստության ոգի կամ նաև - որն ինձ դուր է գալիս՝ ինքնատիրապետման ոգի, սակայն նշանակությունն ամբողջովին նույնն է: Զգաստություն, ինքնատիրապետում, իմաստություն: Սուրբ Հոգին զգաստության ոգին է: Այն մեզ հիշեցնում է՝ ,, Ոչ մի մտահոգություն, քանի որ դու սոսկ մի գործիք ես: Հիմնական աշխատանքը կատարում է Աստված: Դու միայն ծառայող ես,, : Բայց այնպես չէ, որ Տերը մեր օգնության կարիքն ունի: Մենք ծառայում ենք Տիրոջը, քանի որ մենք ուզում ենք նմանվել Հիսուսին: Երբ մենք լսում ենք Սուրբ Հոգուն, ապա զգաստ ենք լինում և մեզ ամենի ինչից կարևոր չենք համարում:

Դա վերաբերում է բոլորիս՝ գլխավոր առաքյալին, շրջանային առաքյալին, եղբորը, քրոջը, երեխային, երիտասարդին: Զգաստություն: Խոսքն իմ մասին չէ, այլ՝ Աստծո: Ես միայն ծառայող եմ: Սա մենք քարոզում ենք արդեն տարիներ ի վեր, բայց երբեմն ես ինձ հարց եմ տալիս, թե ես արդյոք դա հասկացել եմ: Իսկապե՞ս հավատացել եմ: Զգաստություն: Աստված նա է, ով գործում է: Մենք միայն նրա գործիքներն ենք:

Ինքնատիրապետման ոգի: Ի՞նչ է նշանակում սա: Դա շատ հեշտ է բացատրել: Սուրբ Հոգին ասում է մեզ՝,, Մտածիր այն մասին, որ վերաբերվես քո մերձավորի հանդեպ այնպես, ինչպես կուզենայիր, որ քեզ վերաբերվեն,,: Սա նոր բան չէ, սակայն մտածենք այս մասին, թե արդյոք այդ միտքը մեր սրտերում ապրում է: Եթե դա այդպես է, ապա մենք ունենք բավարար ինքնատիրապետում, իսկ ինքնատիրատեպման ոգին օգնող է:

Իմաստության ոգի: Սուրբ Հոգին մեզ համար հնարավոր է դարձնում տարբերելու ոգիներն այնպես, ինչպես Հիսուսի պարագայում է, երբ նա փորձության էր ենթարկվում: Սատանան գալիս է և ուզում է փորձության ենթարկել Հիսուսին: Նա անգամ մեջբերում է անում Սուրբ գրքից: Պատկերացրեք դա: Սատանան ունի Սուրբ գրքի իրեն հատուկ մեկնաբանությունը, և այդ մեկնաբանությամբ էլ նա գալիս է Հիսուսի մոտ: Բայց, Սուրբ Հոգու օգնությամբ Հիսուսը կարողանում է ճանաչել, որ դա իր Հոր կամքը չէ: Նա կարողանում է նաև հասկանալ այն մոտիվացիան, որը թաքնված է սատանայի գործունեության հետևում: Անգամ, եթե նա մեջբերում էր Սուրբ գիրքը, սատանայի մոտիվացիան բարի չէր: Դա վերաբերում է նաև մեզ, սիրելի եղբայր և քույր: Մենք ընդունել ենք Սուրբ Հոգու շնորհները: Սուրբ Հոգին բնակվում է մեր սրտերում և սովորեցնում է մեզ ժամերգության ընթացքում հնչող քարոզի միջոցով: Օգտվենք

դրանից, որպեսզի կարողանանք տարբերել ոգիներին, անգամ, եթե նրանք մեջբերում են Սուրբ գիրքը: Եթե ինչ-որ բան Սուրբ Հոգուց է գալիս, ապա դա բերում է սիրո, խաղաղության, ուրախության, ընկերասիրության և ինքնատիրապետման մտքեր կամ արարքներ: Սա է Պողոսի սահմանումը: Ուրեմն՝ երբ ինչ-որ բան է տեղի ունենում, ասվում կամ հրապարակվում, խնդրում եմ ստուգեք այն: Եթե դա գալիս է Սուրբ Հոգուց, ապա այն բերում է խաղաղություն, սեր, ուրախություն, բարություն և ինքնատիրապետում: Այդ գործիքի հետ շատ հեշտ է ոգուն ճանաչելը-ուժի, սիրո, զգաստության, իմաստության և ինքնատիրապետման ոգուն: Սիրելի եղբայրներ և քույրեր ամփոփենք՝ մեր նպատակը հավիտենական միասնությունն է Հիսուս Քրիստոսի հետ: Դրա համար մենք պետք է նմանվենք Հիսուս Քրիստոսին: Նա սիրողն ու ծառայողն է: Քանի որ մենք ընդունել ենք Սուրբ Հոգին, մենք ի վիճակի ենք ծառայել Տիրոջը, Աստծուն և եկեղեցում՝ ուժի, սիրո և իմաստության ոգով: Աստված ցանկանում է, որ մենք նմանվենք Հիսուսին, իսկ նրա օգնությամբ մենք դա կարող ենք անել: Հարցը կայանում է միայն նրանում՝ դու՞ էլ ես ուզում:

Համաքարոզներից հետք գլխավոր առաքյալն ասաց՝ ,, Ինչպես սկզբում ասացի, մտածենք Հոգեգալստյանը Սուրբ Հոգու ուղարկման և ներգործության ու այն նշանակության մասին, որն ընկած է դրա հիմքում: Սուրբ Հոգին մեզ համար բացահայտում է Աստծո սերը, Հիսուս Քրիստոսի սերը: Նա մեզ սովորեցնում է, թե ինչ մեծ է Հիսուսը, ինչ մեծ է նրա սերը, և այդպես նա մեր մեջ արթնացնում է միշտ Քրիստոսին ավելի նմանվելու ցանկությունը:

Նա նաև մեզ սովորեցնում է, թե ինչն է Աստծուն դուր գալիս, ինչն է նրա կամքին հակառակ, հետո մենք նկատում ենք, որ մենք շատ հեռու ենք Հիսուսի նման լինելուց: Երբեմն մենք կորցնում ենք մեր արիությունը և ասում ենք, որ մենք պարզապես չենք կարող: Մենք չենք կարող այնպիսին լինել, ինչպիսին Հիսուսն է, սիրել այնպես, ինչպես՝ նա, ծառայել այնպես, ինչպես՝ նա: Այդ դեպքում գալիս է մխիթարիչը՝ Սուրբ Հոգին, ով մեզ ասում է՝ ,,Մի վախեցեք: Դուք չեք կարող առանց մեղքի մնաք: Դուք չեք կարող մեղքից ազատ լինել: Հիսուս Քրիստոսը միակն էր, ով առանց մեղքի էր: Այն, ինչը դու պետք է անես, դա Քրիստոսի սիրո մեջ աճելն է,,:

Սուրբ Հոգին մեր օգնականն է: Նա օգնում է մեզ ճիշտ ձևով աղոթել և այն բանի համար խնդրել, որն անհարժեշտ է մեր փրկության համար: Սուրբ Հոգին ասում է մեզ՝,, Մի աղոթիր այն բանի համար, որ կատարյալ դառնա: Դա չի լինի: Աղոթիր, որ քո սերը Աստծո և մերձավորի հանդեպ աճի,,:

Այս շաբաթ ես մեր երգերից մեկի շուրջն էի մտորում և ամրագրեցի, որ դա մի հրաշալի, Սուրբ Հոգուց ներշնված աղոթք է՝,, Ես ցանկանում եմ քեզ ավելի սիրել,,: Դա կա գրեթե բոլոր լեզուներում: Թույլ տվեք միայն առաջին տողերը կարդալ՝,, Ավելի շատ եմ քեզ ցանկանում սիրել, լսիր իմ աղոթքը: Ես աղաչում եմ սրտանց, կանչում վաղ թե ուշ՝ ավելի շատ եմ ուզում քեզ սիրել, ավելի շատ սիրել քեզ՝ Փրկիչ, ավելի շատ սիրել քեզ, ավելի շատ սիրել քեզ: Ինչ հիանալի, Սուրբ Հոգով ներշնչված աղոթք է: Ես ցանկանում եմ առաջարկել, որ մենք մի պահ ժամանակ գտնենք, որպեսզի մեզ ներշնչել տանք Սուրբ Հոգով և այս աղոթքը խորը ներթափանցել տանք մեր սրտեր, մեր հոգիներ:

Հիմնական մտքեր

- Մենք հավատում ենք մեր Սուրբ կնունքին:
- Աստված իր ոգու ուժը մեր մեջ է դրել:
- Մենք չենք վախենում, Սուրբ Հոգին մեզ ուժեղ և ունակ է դարձնում սիրելու:
- Սուրբ Հոգու շնորհիվ մեզ հաջողվում է սովորել ինքնատիրապետելը:.

Հայաստանի Նորառաքելական եկեղեցու կանանց երգչախումբը 30 տարեկան է

Լուսանկարը՝ Հայաստանի ՆԱԵ

Մեր եկեղեցու աղջիկների երգչախումբը Վրաստանի երիտասարդների հետ՝ 2004-ի Երիտասարդների օրը Հայաստանում

Երգչախումբն արդեն ժամանել է տոնակատարության վայր

Առաքյալ Բերնդ Քլիփփերթի առաջադրանքով 1993 թվականի գարնանը Երևանում կազմավորվեց Հայաստանի Նորառաքելական եկեղեցու առաջին երգչախումբը: Երգչախմբի առաջին անդամները հավաքագրվեցին Երևանի կենտրոնի և Հարավ-Արևմտյան թողամասի նորառաքելական եկեղեցու համայնքներից, ընտրվեցին երաժշտական ունակություններ և կարողություններ ունեցող աղջիկներ որոնք այդ ժամանակ տասներկուսից մինչև տասնչորս տարեկան էին: Հաջորդ այցի ժամանակ առաքյալ Բերնդ Քլիփփերթը իր հետ գերմաներեն լեզվով գրված երգարան բերեց, որում ընդգրկված էին ժամերգությունների ժամանակ ավելի հաճախ երգվող երգեր: Այդ երգերը համապատասխան մասնագետների կողմից թարգմանվեցին հայերեն: Այսպես, Աստծո օգնությամբ, մենք սկսեցինք այս օրհնաշատ աշխատանքը: Տարիների ընթացքում այդ աղջիկները մեծացան, ամուսնացան, դարձան հասուն կանայք, բայց շարունակեցին երգել երգչախմբում: Երեսուն տարվա ընթացքում կանանց երգչախումբը հաճախ ելույթ է ունեցել նաև մարզային եկեղեցիներում անցկացվող ժամերգությունների ժամանակ: Եղել են ելույթներ նաև Վրաստանի նորառաքելական եկեղեցու համայնքներում: 2009 թվականին մեր երգչախմբի անդամներից մի քանիսը մասնակցեցին

Երգչախմբի աղջիկները առաքյալ Վ. Հոյերի հետ՝ 2009-ի Երիտասարդների օրը Գերմանիայում

Այց Վրաստան՝ Թբիլիսի, 2010-ին. Հայաստանում գլխավոր առաքյալ Վ. Լեբերի հետ 2009-ի տոնական ժամերգության ժամանակ

Երգչուհիներից մեկը իր երեխաների հետ

Այստեղ մյուս երգչուհին է իր աղջկա հետ

Երգչախմբի ղեկավարն իր զավակների հետ

նաև Միջազգային Նորառաքելական եկեղեցու կողմից կազմակերպված Երիտասարդների օրվա միջոցառմանը: Միջոցառման շրջանակներում երգչախումբը եղավ նաև Օբերհաուզեն քաղաքի նորառաքելական եկեղեցու կենտրոնի համայնքում, ելույթ ունեցավ համայնքի անդամների համար, ովքեր իրենց գոհունակությունն ու շնորհակալությունը հայտնեցին գեղեցիկ կատարումների համար, ի դեպ՝ նաև գերմաներեն:

Այս տարիների ընթացքում երգչախմբի անդամների թիվը նվազել է, քանի որ տարբեր պատճառներով նրանք տեղափոխվել են այլ երկրներ՝ բնակության: Այսօր երգչախումբն ունի ընդամենը չորս անդամ, ովքեր մինչ այսօր հավատարմորեն և պատրաստակամ ելույթ են ունենում ժամերգությունների ընթացքում և իրենց գեղեցիկ կատարումներով ոչ միայն զարդարում են ժամերգությունները, այլ նաև ժամերգությունների համար ընտրված աստվածաշնչյան խոսքերին համահունչ երգերով ավելի ըմբռնելի են դարձնում այդ խոսքերի իմաստը: Հայաստանի Նորառաքելական եկեղեցու բոլոր համայնքների քույր-եղբայրների անունից շնորհակալություն եմ հայտնում երգչախմբի բոլոր անդամներին երգչախմբի երեսնամյակի առիթով, առանձնահատուկ երախտագիտությունս եմ հայտնում երգչախմբի այսօրվա չորս անդամներին, ովքեր այսօր էլ բոլորիս հիացնում են իրենց հրաշալի կատարումներով:

ՀԻՍՈՒՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ

ԸՍՏ ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑԻ 1, 4-12-Ի

Իր հարությունից հետո Հիսուսը երևաց առաքյալներին: Մինչ իր համբարձումն ընկած քառասուն օրերի ընթացքում նա նրանց պատմեց Աստծո արքայության մասին:

Հիսուսը հրահանգեց իր աշակերտներին չթողնել Երուսաղեմը: Նրանք պետք է սպասեին, մինչև ոգին մոտենար աշակերտներին: Հիսուսն ասում է՝ ,, Հովհաննեսը մկրտեց ջրով, բայց դուք այս օրերից ոչ շատ հետո պիտի մկրտվեք Սուրբ Հոգով,,:
Միասին նրանք գնում են դեպի Բեթղեհեմ՝ Զիթենյաց լեռը:
Առաքյալները հարցնում են Հիսուսին՝,, Տեր, այս ժամանակու՞մ է, որ վերահաստատելու ես

Իսրայելի թագավորությունը,,։
Իսկ նա պատասխանում է նրանց՝,, Ձեզ տրված չէ իմանալ այն ժամերը և ժամանակները, որ Հայրը հաստատեց իր իշխանության մեջ, այլ, երբ Սուրբ Հոգին իջնի ձեր վրա, զորություն պիտի առնեք և ինձ վկաներ պիտի լինեք Երուսաղեմում, ամբողջ Հրեաստանում ու Սամարիայում և մինչև երկրի ծայրերը,,։
Այն բանից հետո, երբ Հիսուսը սա ասաց, նա երկինք վերացավ, և ամպը նրան ծածկեց նրանց աչքերից, և առաքյալները նրան այլևս չտեսան։ Եվ մինչ նայում էին նրա ետևից, նրանց երևացին սպիտակ զգեստների մեջ երկու մարդիկ, որոնք և ասացին՝,, Ինչու՞ կանգնած նայում եք երկնքին, այս Հիսուսը, որ ձեր միջից երկինք վերացավ, պիտի գա նույն ձևով, ինչպես տեսաք նրա երկինք գնալը,,։
Դրանից հետո առաքյալները վերադարձան Երուսաղեմ և սպասեցին Սուրբ Հոգուն։

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՌՈՒԹԻՆ՝ ՖՐԻԹԱՈՒՆՈՒՄ / ՍԻԵՐՐԱ ԼԵՈՆԵ/

Իմ անունը Ռութ է, և հուլիսին ես դառնում եմ տասներկու տարեկան: Այստեղ ես կրում եմ իմ տրիկոն, որով ես երկրպագում էին Սիերրա-Լեոնեի ֆուտբոլային թիմին Աֆրիկայի ազգային գավաթի վերջին խաղում:

Դպրոցում ես սիրում եմ կրոն, ֆրանսերեն և անգլերեն առարկաները: Ես ցան անում եմ հետագայում տվյալների վերլուծաբան դառնալ, սակայն մաթեմատիկայից դժվարանում եմ: Սա իմ դասարանն է: Ես նստում եմ առաջին շարքում և ձախից երկրորդն եմ:

Ես հաճույքով եմ խաղում իմ ընկերների հետ, ամենաշատը՝ լողափին: Այստեղ ես ծննդյան խնջույքի գնալու ճանապարհին եմ:

Իմ ընտանիքը՝ հայրս աշխատում է որպես թարգմանիչ: Նա ծագումով Սիերրա Լեոնեի արևմտյան մասից է: Իմ մայրը Գվինեայից է, նա տնտեսագետ-գիտնական է: Իմ կրտսեր եղբոր անունը Մորիե է, նա երկու տարեկան է:

Սիերրա Լեոնենունի հիանալի լողափեր: Ֆրիթաունի մայրաքաղաքն ընկած է Ատլանտյան Օվկիանոսի ափին: Իմ հայրը Լումլեի համայնքի առաջնորդն է, իսկ մենք ապրում ենք եկեղեցու տարածքում: Այդտեղից մենք հաճախ ենք գնում լողափ, որը ուղիղ եկեղեցու մոտ է:

Էքսկուրսիաների ժամանակ ես ամենից շատ սիրում եմ ուտել բամիայով մանիոկ, ռեստորանում՝ տապակած հավ բրնձով և բանջարեղենով կամ պիցցա:

Քանի որ այստեղ կան չորային և անձրևային ժամանակներ, մենք չենք կարողանում ամեն եղանակի ծով գնալ: Անձրևային ժամանակները տևում են մայիսից մինչև հոկտեմբեր, ամենաուժեղ անձրևները տեղում են օգոստոսին և սեպտեմբերին: Երբեմն օրերով անընդմեջ անձրև է տեղում՝ ես դա բոլորովին չեմ սիրում:

Այս լուսանկարն արվել է այն ժամանակ, երբ մեր եկեղեցին օծվեց:

Իսկ այստեղ դուք տեսնում եք մեր համայնքի քույր-եղբայրների մի մասին: Ես հաճախում եմ կիրակնօրյա դպրոց և նախապատրաստվում եմ կոնֆիրմանտների պարապմունքների համար:

Ես հաճույքով երաժշտությամբ եմ զբաղվում՝ նվագում եմ սոգուլլա, դա Սիերրա Լեոնեի տիպիկ գործիք է: Իմ կողքի թմբուկը ևս կարողանում եմ նվագել: Դրանից բացի, ես սովորում են դաշնամուր նվագել և երգում եմ երգչախմբում:

Հունիսի 16-ին մենք տոնում ենք աֆրիկյան երեխաների օրը: Մենք տարբեր համայնքների երեխաներով հավաքվում ենք Ֆրիիթաունի կենտրոնական եկեղեցում, որպեսզի մասնակցենք երեխաների համար ժամերգությանը: Նկարում երևում են մեր համայնքի երեխաները, ես կանգնած եմ հետևում՝ աջից երկրորդն եմ:

Աղբյուրը՝ Անագիր՝ Մենք՝ երեխաներս, հրատարակություն 05 2023, լուսանկարները՝ մասնավոր՝ stock.adobe.com: robertonencini, Michael, Marina Zlochin

Լուսանկարը՝ sticker2you - stock.adobe.com

Կանանց ձեռնադրություն՝ ուսուցողական հետևություններ

Համարժեքություն և հավասար արժանապատվություն Արարիչ Աստծո առաջ, ոչ մի խոսք Հիսուս Քրիստոսից և հակադրության առաքյալների նամակներում՝ այսպես է հնչում արդյունքը աստվածաշնչյան հաշվառումից: Ուսուցողական ի՞նչ հետևություններ է անում դրանից Նորառաքելական եկեղեցին: -,, Կանանց ձեռնադրության,, վերաբերյալ ուսուցողական շրջաբերականի չորրորդ և վերջին մասը:

,, Հոգևոր պաշտոնի մասին նորառաքելական ըմբռնումը,, ; ՆԱԵԴ 7-ի մեկնաբանություն,, շարադրանքում ներկայացված է՝,, Այն ծառայությունը, որը տրում է յուրաքանչյուր քրիստոնյայի և կատարվում է առանց ձեռնադրության, ունի քարոզչական ասպեկտ: Պետրոս Ա-ի 2, 9-ում համայնքի անդամները դիտարկվում են են անգամ որպես ,, թագավորական քահանայություն,,: Այն հավատացյալները, ովքեր Հիսուս Քրիստոսի հետ մկրտությամբ թաղվել և հարություն են առել, հետևում են նրան և ճանաչում նրան որպես իրենց տեր, բաժին ունեն հավատացյալների ընդհանուր քահանայության մեջ: Այդ քահանայությունը իրականացվում է խոսքով և գործով Քրիստոսին հետևելով: Այդ քահանայությունը, որից եկեղեցական ոչ

մի խորհուրդ չի բխում, տարբերվում է այն քահանայությունից, որը հիմնված է աստվածային ընտրության վրա և տրվում է ձեռնադրությամբ,,:

Թե՛ այս բացատրությունները, և թե՛ նախորդ մասում տրված աստվածաբանական հիմնավորումները, որոնք վերաբերում էին մարդաբանական և սոտերոլոգիական առումներով կանանց հոգևոր պաշտոնի ձեռնադրությանը, հանգեցնում են այն եզրակացության, որ կինը և տղամարդը ոչ միայն միասին են կոչված հավատացյալների ընդհանուր քահանայության, այլև երկուսն էլ կարող են հոգևոր պաշտոնի նշանակվել: Այսպիսով, կանայք կարող են առաքյալի միջնորդությամբ նաև օրհնություն, սրբացում և լիազորություն ստանալ:

Ընտրված Աստծո կողմից

Հավատքի հինգերորդ դրույթը, որում այլոց շարքում քննարկվում է և ձեռնադրության թեման, այսպես է հնչում՝ «Ես հավատում եմ, որ Աստծո կողմից պաշտոնի համար ընտրվածները նշանակվում են միայն առաքյալների կողմից, և որ նրանց ծառայության համար լիազորությունը, օրհնությունն ու սրբացումը գալիս են առաքյալի ծառայությունից» (ՆԱԵԴ 2.4.5): Հավատքի այս դրույթի քննարկումը վճռորոշ նշանակություն ունի վերոհիշյալ նկատառումների համար. «Աստված է մարդուն նշանակում պաշտոնի համար: Հետևաբար, պաշտոնը մարդկային գործ չէ և ոչ էլ՝ համայնքի, այլ այն Աստծո նվերն է իր եկեղեցուն: Մարդը, ինչպես արտահայտվում է Հավատքի դրույթում, պաշտոն է զբաղեցնում աստվածային կամքով և ոչ թե՝ մարդկային որոշմամբ» (նույն տեղում): Խոսվում է ընդհանուր մարդու մասին՝ առանց սեռի հիշատակման, ով Աստծո կողմից ընտրվել է պաշտոնի համար: Կարելի է ասել, որ Աստծո կողմից պաշտոնի համար կարող են ընտրվել և կանայք, և տղամարդիկ :

Օրհնություն և սրբացում

Ընտրյալին ճանաչելու և պաշտոնում նշանակելու խնդիրը դրված է առաքելական ծառայության վրա: Ինչպես կանայք, այնպես էլ տղամարդիկ կարող են ապրել օրհնություն և սրբացում այն ծառայության համար, որը վիճակված է նրանց: Դավանաբանությունը նշում է. «Օրհնության» միջոցով տրվում է աստվածային ուղեկցումը և Սուրբ Հոգու օգնությունը թե՛ քարոզչական և թե՛ սարկավագի ծառայության կատարման համար: «Սրբացումը» վկայում է այն մասին, որ Աստված Ինքն Իր սրբությամբ և անձեռնմխելիությամբ ցանկանում է գործել պաշտոնի միջոցով» (ՆԱԵԴ2.4.5): Օրհնությունն ու սրբացումը անհրաժեշտ են, որպեսզի կինը կամ տղամարդը կարողանա պատշաճ կերպով իրականացնել իր պաշտոնը և իրեն հանձնարարված ծառայությունը:

Պաշտոնի լիազորություն

Այն հոգևոր պաշտոնը, որի համար Աստված ընտրել է, իր բնութագիրն է ստանում ,, լիազորության,, միջոցով: Դավանաբանությունը ներկայացնում է պաշտոնի երեք աստիճան՝ առաքյալ, քարոզիչ, սարկավագ, որոնցից յուրաքանչյուրն ունի տարբեր չափի լիազորություն: Կանայք, ինչպես տղամադիկ, ձեռնադրվում են պաշտոնի այս բոլոր աստիճաններում:,, Նորառաքելական ըմբռնումը հոգևոր պաշտոնի վերաբերյալ,, մեկնություններում պարզաբանվում են այն լիազորությունները, որոնք ընդգրկում են պաշտոնի այս աստիճանները: Առաքյալի պաշտոնի լիազորությունների այլոց թվում պատկանում են Ավետարանի ճիշտ տեղեկացումը, երեք խորհուրդների նվիրաբերումը, Հիսուս Քրիստոսի անունով մեղքերի քավություն տալը, սպասավորների ձեռնադրումը և օրհնության բոլոր նվիրաբերումները:

Առաքյալների ծառայության լիազորությունները տարբեր ձևերով իրականացնում են քարոզիչներն ու սարկավագները: Նրանք բոլորն ուղարկված են առաքյալներից և միասնություն են կազմում նրանց հետ:

Քարոզչի պաշտոնի լիազորություններին այլոց թվում պատկանում են Ավետարանի ճիշտ տեղեկացումը, ջրով մկրտության խորհրդի նվիրաբերումը և Սուրբ Հաղորդության մատուցումը: Քարոզիչները լիազորված են առաքյալի առաջադրանքով և Հիսուս Քրիստոսի անունով մեղքերին քավություն տալ: Նրանք լիազորություն ունեն ժամերգություններ անցկացնել և օրհնանքի նվիրաբերումներ կատարել:

Սարկավագի պաշտոնի լիազորություններին այլոց թվում պատկանում են խոսքի ճիշտ տեղեկացումը, խոսք- ժամերգության ղեկավարումը, Երրորդություն Աստծո անունով ժամերգությունը սկսելը և ժամերգության ավարտին Երրորդության օրհնանքը նվիրաբերելը:

Կանայք և տղամարդիկ պետք է վստահ լինեն, որ նրանք Աստծո կողմից ընտրվում են հոգևոր պաշտոնի: Երկուսն էլ կարող են առաքյալների ծառայության կողմից լիազորություններ ստանալ ծառայելու մարդկանց փրկության և համայնքի բարօրության համար: Դրանից բացի ,, Հոգևոր պաշտոնի մասին նորառաքելական ըմբռնումը,, շարադրանքում շեշտվում է՝ ,, Ձեռնադրվող

սպասավորի ընտրության ժամանակ նկատի են առնվում նրանց այն համապատասխան հատկությունները, որոնք անհրաժեշտ են տվյալ պաշտոնը հետ կապված ծառայությունները կատարելու համար,,: Կանանց և տղամարդկանց համար կարևոր է, որ իրենց ձեռնադրությունից առաջ յուրացնեն ,, Նորառաքելական եկեղեցու հավատամքի տասը դրույթների բովանդակությունները,, և առաքյալների ուսմունքը, ինչպես դրանք մեկնաբանված են Նորառաքելական եկեղեցու դավանաբանության մեջ:

Պաշտոնի առաջադրանքը

Պաշտոնը ինքնանպատակ չէ, այն նաև նրա համար չէ, որ որևէ մեկին առաջ քաշի կամ որպես վարձք տրվի: Հոգևոր պաշտոնի համար ձեռնադրությունը տեղի է ունենում համայնքի պահանջներից և եկեղեցական անհրաժեշտությունից ելնելով: Կանանց ձեռնադրության պարագայում հաշվի են առնվում նաև հասարակական կարծիքները: Նրանց պարագայում ևս, ինչպես տղամարդկանց դեպքում, նկատի է առնվում անձնական վիճակը: Հոգևոր պաշտոնը Քրիստոսի ծառայության ներքո է, այդ ծառայությունը իրականացվում է տեղի համայնքում, մարզում կամ տարածաշրջանային եկեղեցում: Այն կանայք, ովքեր հոգևոր պաշտոն են ստանձնել, առաջադրաքն իրականացնում են համայնքում: Դրանից բացի, նրանք կարող են ղեկավար դեր ունենալ համայնքում, մարզում կամ տարածաշրջանային եկեղեցում: Սպասավորներիկանչման և նշանակման բացատրությունները, որոնք գտնվում են ,, Հոգևոր պաշտոնի մասին Նորառաքելական եկեղեցու ըմռնումներ,, շարադրանքի հատված 6,2,2 -ում /,, Կանչ,,/ և հատված 6, 2, 3 -ում / ,, Նշանակում,,/, կարևոր են նաև նրանց համար:

Եզրակացություն՝ Առաքյալների ծառայությունը գլխավոր առաքյալի հետ միասին- որոշում է, որ սեռերի հավասար արժեորման և հավասար արժանապատվության հիմքով կարելի է կանանց վստահել պաշտոնի լիազորություն: Այս առումով կանայք կարող են ղեկավար դեր ունենալ համայնքում, մարզում ու տարածաշրջանային եկեղեցում և նշանակվել տվյալ պաշտոնի հետ կապված ծառայության: Սակայն, պաշտոնի առաջադրանքը կտրվի միայն այն դեպքում, երբ հասարակական կարծիքը և օրենքի կոնսեսուսը դա թույլ կտա:

Կանաց ձեռնադրության իրականացման վկայություններ

2022 թվականի հունիսին Միջազգային շրջանային առաքյալների ժողովը պարտադիր հայտարարություն արեց. «Աստծո առջև սեռերի հավասար արժեքի և հավասարության պատճառով կանանց կարող է վստահվել պաշտոնի առաջադրանք և պաշտոնի լիազորություն»: Որոշվեց նաև, որ կանանց ձեռնադրությունը հնարավոր կլինի 2023 թվականի հունվարի 1-ից:

Հոգևոր պաշտոնի համար ընտրություն

Տղամարդու և կնոջ համար հավասարապես ճիշտ է, որ նրանք կարող են պաշտոն զբաղեցնել «աստվածային կամքով և ոչ թե՝ մարդկային որոշմամբ», քանի որ Աստված ինքն է ընտրում մարդուն պաշտոնի համար: «Հոգևոր պաշտոնը մի կողմից ծառայություն է Աստծուն, մյուս կողմից՝ մարդկանց»: Եթե դուք սա ընդունում եք, ապա քվոտային համակարգը որպես հոգևոր պաշտոնի ընտրության չափանիշ՝ բացառվում է: Թեև կանանց և տղամարդկանց ձեռնադրության նախապայմանն աստվածային կոչումն է, սակայն ծրագրված ձեռնադրության դեպքում միշտ բավարար չափով հաշվի են առնվում համայնքի, մարզի կամ տարածաշրջանային եկեղեցու կարիքներն ու անհրաժեշտությունը:

Դիտարկվում են նաև այն իրավասությունները, «որոնք պահանջվում են համապատասխան պաշտոնի հետ կապված ծառայությունների համար»: Ձեռնադրության միջոցով «արթնանում և օծվում են պաշտոնը կատարելու համար գոյություն ունեցող շնորհները» (ՆԱԵԴ 7.7): Սա նշանակում է, որ «լավ կարողություններն ու որակները, որոնցով օժտված է տվյալ անձը, [...] ձեռնադրման արարողությամբ դրվում են պաշտոնի ծառայության մեջ՝»: Կանայք և տղամարդիկ իրենց ունակությունները, հատուկ կարողությունները և բնավորության դրական գծերը ներ են դնում պաշտոնի կատարման մեջ և դրանք օգտագործում են համայնքի բարօրության համար:

Պարտավորությունները հոգևոր պաշտոնում

Հոգևոր պաշտոնի համար կանչվածները խոստանում են ուսուցանել Սուրբ Գրքի վկայության համաձայն, ինչպես գրված է Հավատամքի տասը դրույթներում և Նորառաքելական եկեղեցու դավանաբանությունում: Նրանց պաշտոնի կատարումը մշակված է «Սպասավորների

Լուսանկարը՝ Gajus - stock.adobe.com

ուղեցույցի» համաձայն: Տղամարդկանց և կանանց համար «պաշտոնն ու անձը, պաշտոնի կատարումը և անձնական կարողությունը միահյուսված են»: Միևնույն ժամանակ, պաշտոն կատարողները պետք է տեղյակ լինեն, որ ոչ թե իրենք, այլ Հիսուս Քրիստոսն է պաշտոնի տերը՝ պաշտոնը անձի տիրապետության տակ չէ, այն նաև անջնջելի դրոշմ չէ մարդու վրա, այլ այն կա և մնում է Քրիստոսի պարգևը, որը Հիսուս Քրիստոսն ունի իր տրամադրության տակ, որը նա շնորհում է կամ արգելում »:

Որպեսզի Աստծուն և մարդկանց իսկապես կարողանան ծառայել, կարևոր է, որ սպասավորներն ու սպասավորուհիները պաշտոնը լրջությամբ ընդունեն: Դա նրանք արտահայտում են նրանով, որ ձգտում են ձեռք բերել գիտելիքներ և կարողություններ , որոնք անհարժեշտ են տվյալ պաշտոնը կատարելու համար: Նրանք պետք է ընդունեն եկեղեցու հոգևոր և աստվածաբանական պահանջները:

Կարիերան հոգևոր պաշտոնում

Ձեռնադրմամբ տղամարդիկ և կանայք ստանում են և՛ պաշտոնի լիազորություն, և՛ պաշտոնի առաջադրանք՝ աշխատելու համայնքում, մարզում կամ շրջանային եկեղեցում: Կանայք կարող են ձեռնադրվել սարկավագ, քարոզիչ և առաքյալ: Կանայք, ինչպես և տղամարդիկ, կարող են նաև հանձնարարություն ստանալ և նշանակվել, ղեկավար դեր կատարել համայնքում, մարզում և ընդհանուր եկեղեցում:

Քանի որ պաշտոնի առաջադրանքը հավասարապես տարածվում է տղամարդկանց և կանանց վրա, նրանց նկատմամբ կիրառվում են նաև պաշտոններ զբաղեցնելու, կենսաթոշակի անցնելու, արձակուրդի, պաշտոնից ազատվելու և պաշտոնից հեռացվելու վերաբերյալ համապատասխան դրույթները: Սպասավորները կարող են իրենց պաշտոնն իրականացնելիս որոշակի պայմաններով արձակուրդ ստանալ: «Սպասավորների ուղեցույցը» ցույց է տալիս, որ սպասավորներին կարող են արձակուրդ տալ անձնական, մասնագիտական կամ առողջական պատճառներով, իսկ կին սպասավորի դեպքում նաև հղիությունը կարող է հիմք հանդիսանալ նման արձակուրդի համար: Արձակուրդի տևողությունը չպետք է գերազանցի երեք տարին:

Շրջանային առաքյալների ժողովը նաև անդրադարձավ սպասավորների և սպասավորուհիների հագուստի կանոններին և եկավ այն եզրակացության, որ ժամերգության ժամանակ սպասավորները հագնեն սև և սպիտակ: Հագուստը տվյալ առիթով համահունչ է: Համապատասխանաբար հաշվի են առնվում տարածաշրջանային պայմանները:

Խմբագրական
Հրատարակիչ՝ Ժան - Լյուք Շնայդեր, Իուբերլանդսշթրասսե 243, 8051 Ցյուրիխ / Շվեյցարիա
Ֆրիդրիշ Բիշոֆֆ ՍՊԸ հրատակաչություն. Ֆրանկֆուրտյան փողոց 233, 63263 Նոյ-Իզենբուրգ/ Գերմանիա
Խմբագիր՝ Սիմոն Հայնիգեր



Տեղեկատու

01.10.2023	Աուգսբուրգ (Գերմանիա)
08.10.2023	Մոսկվա (Ռուսաստան)
13.10.2023	Մոնտեկարլո (Արգենտինա)
15.10.2023	Բուենոս Այրես (Արգենտինա)
22.10.2023	Մեց (Ֆրանսիա)
29.10.2023	Փադերբորն (Գերմանիա)
04.11.2023	Ալդելա դոս Փալհելրոս (Պորտուգալիա)
05.11.2023	Պորտիմաո (Պորտուգալիա)
10.11.2023	Դաքքա (Բանգլադեշ)
12.11.2023	Փյունե (Հնդկաստան)
14.11.2023	Յագդալփուր (Հնդկաստան)
26.11.2023	Ցյուրիխ-Հոթթինգեն (Շվեյցարիա)
07.12.2023	Մոկուբա (Մոզամբիկ)
10.12.2023	Յոհաննեսբուրգ (Հարավային Աֆրիկա)
17.12.2023	Մագդեբուրգ - Հարավ (Գերմանիա)
25.12.2023	Ստրասբուրգ (Ֆրանսիա)
31.12.2023	Թյուբինգեն (Գերմանիա)

New Apostolic Church
International